

ք.Ալավերդի,
28.10.2016թ.
Ելք № 055

ԱԼԱՎԵՐԴԻ ՕՐՀՈՒՄ ԿԵՆՏՐՈՆԻ
ՀԱՄԱԿԱՐԳՈՂ
տկն. Ա. ԷՎՈՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Էվոյան,

Շնորհակալություն հայտնելով «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲ ընկերության գործունեության նկատմամբ ցուցաբերած հետաքրքրության և հատկապես բնապահպանական խնդիրներին աջալըջորեն հետևելու համար, տեղեկացնում ենք, որ իսկապես ընկերությունը դիմել է ՀՀ կառավարությանը, ներկայացնելով Ալավերդի քաղաքի վրա արտանետումների ազդեցությունը մեղմելու ուղղությամբ ընկերության կողմից մինչև օրս ձեռնարկված միջոցառումները, այդ միջոցառումների արդյունքները և ընկերության առջև ծառայած խնդիրներն ու հեռանկարային պլանները՝ Կառավարությունից խնդրելով և ակնկալելով աջակցություն նշված խնդիրները լուծելու համար:

Կառավարության կողմից դեռևս որևէ պատասխան չենք ստացել, ուստի իրավիճակը ձեզ համակողմանի ներկայացնելու և մեզ համար կարևոր հասարակական կարծիք ստանալու նպատակով ձեր կողմից նշված գրությունը, ինչպես նաև կառավարության պատասխանն ու ընկերության զարգացման հեռանկարային ծրագրերը ձեզ կներկայացվեն մեկ փաթեթով՝ դրանք պատրաստ լինելուն պես:

Հարգանքով՝

Լուսինե Էֆջյումյան
Տնօրեն

